ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 03.12.2015թ. ստացվել է բողոք:

Բողոք բերող անձ՝ «Տեխնո-Ար» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/75» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, ՀՀ պաշտպանության նախարարություն կողմից տնտեսական, սանհիգենիկ և լվացքի միջոցների ձեռքբերում:

Բողոքի առարկան և պահանջը՝ Չեղյալ հայտարարել հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը և գնային առաջարկում տառերով նշված գինը հիմք ընդունելով կատարել թվաբանական սխալների ուղղում:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ